

պետն Հայոց Մովսէս, որում սպասեալն զալ ի մօտոյ, կամիցիմ խօսել ընդ նմա... արգեամբք իսկ եկն եհաս յիշեալ հայրապետն եւ խօսեցայ ընդ նմա ի բազում նուագս» (տե՛ս վարը՝ էջ 345)։ Ուստի 1629 Մարտ—Ապրիլ ամիսներուն, օծումէն քանի մ'ամիս ետքը զացած է Մովսէս Սպահան։ Դաւրիժեցւոյ խօսքը, թէ Մովսէս ութ ամիս զեղերած է հարկի խնդրոյն համար Շահին դուռը, պէտք է այնպէս ընդունիլ թէ 1628 եւ 1629 տարիներուն մօտաւորապէս 8 ամիս անցուցած է Սպահան։

17. ՍԱՀԱԿ ԳԱՌՆԵՅԻ ԵՒ ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սահակ Գառնեցի, որ կը թափառէր Վասպուրական, տհաճութեամբ լսեց Մովսէս կաթողիկոսի օծութեան համբաւը. «զի համարէր ի սրտի իւրում թէ Մովսէսն առանց իրաւանց՝ հնարիւք իմն եհան զաթոռն եւ զկաթողիկոսութիւնն ի ձեռանէ իւրմէ եւ յինքն կորզեալ ընկալաւ զերկոսեանն» (Դաւր. 239)։ Սաստիկ բարկացած միտքը զբաւ ինք զինքը օսմանեան պետութեան մէջ գտնուող Հայոց համար անկախ կաթողիկոս հռչակել։ Իրեն քաջալեր գտաւ յանձին Այնթափցի Պօղոս վարդապետի։ Փիլիպպոս վարդապետ, որ Մովսէս կաթողիկոսի կողմէն իբրեւ նուիրակ ուղարկուած էր Տաճկաստան, հանդիպելով Վան, շատ աշխատեցաւ ետ կեցնել Սահակը փնասակար խորհուրդէն. խոստացաւ